



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 08 >> << *Օգոստոս* >> 2019թ.

N *ՎՊՆ/333-2019*

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 26-Ի ՈՍՈ/147-2019 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի ապրիլի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում 2019 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելու մասին>> ՈՍՈ/147-2019 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - 1) որոշման ՈՒ հավելվածում՝
 - ա. <<Վ. Մկրտչյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի Արմավիրի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ >> բառերը փոխարինել <<Ա. Պողոսյան- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ>> բառերով,
 - բ. <<Ս.Չալյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ>> բառերը փոխարինել <<Ս. Սարգսյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ> բառերով,
 - գ. <<Ա. Մուրադյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար>> բառերը փոխարինել <<Ա. Սարգսյան-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար>> բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**Մարզպետի
տեղակալ՝**

Կ. Գրիգորյան

08.08.2019



VERIFIED OCSP 08.08.2019 14:33:59 GMT+4

Подписано: GRIGORYAN KAREN 2212890818